

---

## ՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ Ե ԽՈՆԱՐԴՄԱՆ ԱՆ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԶԵՎԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

### ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Ինչպես հայտնի է, հին հայերենի **Ե** խոնարհման **ան** ածանցավոր բայերը անցյալ կատարյալում (և դրա հիմքից կազմված ժամանակաձևերում) խոնարհվում էին ներգործածն վերջավորություններով (հնմտ. **հասանեմ - հասի** «հասա», **եհաս** «հասավ», **գտանեմ - գտի** «գտա», **եգիս** «գտավ» և այլն), իսկ միջին հայերենում արդեն սկսում են հանդես գալ կրավորածն վերջավորություններով՝ **հասայ, հասաւ, գտայ, գտաւ** և այլն: Ընդ որում, «միջին հայերենում սկիզբ առաջ այս երևույթը հետագայում ամբողջացավ ու տիրապետող դարձավ: Այժմ գրական լեզվի երկու հատվածներում էլ բացարձակապես այս կազմությունն է իշխում»<sup>1</sup>:

Նկատենք, որ հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում հետազոտողները սովորաբար բավարարվում են նշված քերականական փոփոխությունը արձանագրելով, իսկ դրա բուն դրդապատճառներն ու նախադրյալները, ըստ էության, չեն մեկնաբանվում<sup>2</sup>: Իհարկե, Յ. Աճառյանը մատնանշում է այն հանգամանքը, որ «գրաբարի մեջ **-այ, -ար, -աւ...** վերջավորությունները նշտապես և կանոնավորապես կրավորականի հատուկ վերջավորություններ չեն, այլ շատ անգամ ծառայում են նաև իբր ներգործական»<sup>3</sup>: Սակայն տվյալ դեպքում նրա բուն նպատակն է ցույց տալ, որ «միջին հայերենի (և աշխարհաբարի) կատարյալի **-այ, -ար, -աւ** վերջավորությունը իրապես ոչ թե կրավորականից ներգործականի անցում է», այլ լծորդության մասնակի փոփոխություն»<sup>4</sup>: Ուստի Յ. Աճառյանը չի բացատրում, թե վերոհիշյալ հանգամանքը (այն է կրավորածն խոնարհման վերջավորությունների՝ նաև ներգործական սերի իմաստով կիրառվելը) կոնկրետ ինչպես է նպաստել **Ե** լծորդության ածանցավոր բայերի խոնարհման տիպի փոփոխությանը: Դեռ ավելին. նա հին հայերենի անցյալ կատարյալում կրավորածն խոնարհվող, բայց կրավորականի իմաստ չարտահայտող բայերի օրինակների թվում նշում է նաև այնպիսիները (օրինակ՝ **խօսիմ, գողանամ, ունիմ, տանիմ, ուտեմ, երթամ**), որոնք, ներկարձիքով, չեն կարող նպաստել գրը. **Ե** լծորդության ածանցավոր բայերի (**տեսանեմ, գտանեմ** և այլն) խոնարհման տիպի հետագա փոփոխությա-

<sup>1</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. 1, Եր., 1972, էջ 333:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, թերակ. մաս, էջ 70, J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen. Berlin, 1970, S. 326-327, Յ. Աճառյան, Քայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 250, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. 1, էջ 332-333, «Քայոց լեզվի պատմական քերականություն», հ. 2, Եր., 1975, էջ 200, Ս. Ղ. Ղազարյան, Քայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 257:

<sup>3</sup> Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Ա, Եր., 1959, էջ 404:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 405:

նը անցյալ կատարյալում:

Այսպես, հազիվ թե **խօսիմ** բայի անցյալ կատարյալի **խօսեցայ** ձևը որևէ դեր խաղացած լինի **գտայ, տեսայ** և այլ միջնինհայերենյան ներգործական սերի ձևերի առաջացնան հարցում, եթե նկատի ունենանք, որ **Ե** լծորդության պարզ բայերը, կառուցվածքային տեսանկյունից ավելի մոտ լինելով **Ի** լծորդության պարզ բայերին (**խօսիմ** և այլն), այդուհանդերձ կրավորածն խոնարհման (-այ, -ար և այլն) չեն անցել: Նմանապես, հիշյալ փոփոխությանը չին կարող նպաստել վերը բերված **ունիմ, տանիմ** և այլ բայերը:

Կարծում ենք՝ **տեսի > տեսայ** «տեսա», **գտի > գտայ** «գտա» և նման ձևերի փոփոխությունը պայմանավորված է եղել մի կողմից՝ գրբ. **Ի** խոնարհման **ան** ածանցավոր բայերի (**մեռանիմ - մեռայ, անկանիմ - անկայ** և այլն), մյուս կողմից՝ **ու** խոնարհման **Ա** ածանցավոր բայերի (**հեծնում - հեծայ, ջեռնում - ջեռայ** և այլն) համարբանական ազդեցությամբ, և դրա համար հիմք են ծառայել հետևյալ նախադրյալները:

Յայտնի է, որ գրաբարում **Ե** խոնարհման անցողական բայերը (այդ թվում՝ **ան** ածանցավորները) անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակածերում ներգործական սերի իմաստով կրավորվելիս խոնարհվում էին ներգործածև վերջավորություններով՝ **ի, եր, -, ար, էր (իր), ին,** իսկ կրավորական սերի կամ կրավորակերպ չեզոք սերի իմաստով գործածվելիս ստանում էին կրավորածև վերջավորություններ՝ **այ, ար, աւ, ար, այր (արուք), ան.** հմնտ. **տեսանեմ - ետես** «տեսավ» և **տեսաւ** «տեսնվեց», **սպանանեմ - սպան / եսպան** «սպանեց», **սպանաւ** «սպանվեց» և այլն: Մինչդեռ **Ի** խոնարհման անցողական (այսպես կոչված՝ հասարակ) բայերը թե՛ ներգործական և թե՛ կրավորական կամ կրավորակերպ չեզոք սերերի իմաստներով կրավորվելիս միշտ խոնարհվում էին միևնույն կրավորածն վերջավորություններով. հմնտ. **ծնանիմ – ծնաւ** «ծնեց» և «ծնվեց», **սկսանիմ – սկսաւ** «սկսեց» և «սկսվեց» և այլն: Բացի այդ, **Ի** խոնարհման անանցողական բայերը ևս միշտ ստանում էին կրավորածև վերջավորություններ և, բնականաբար, միայն չեզոք սերի իմաստ էին արտահայտում. հմնտ. **անկանիմ-անկաւ** «ընկավ» և այլն<sup>5</sup>:

Եթևարար, ստացվում էր այնպես, որ **Ի** խոնարհման **ան** ածանցավոր բայերը, անկախ բայսեռային իմաստից, անցյալ կատարյալում միշտ հանդես էին գալիս կրավորածև վերջավորություններով, մինչդեռ **Ե** խոնարհման **ան** ածանցավորներից կրավորածև վերջավորություններ ստանում էին միայն անցողականները, այն էլ՝ միայն կրավորական կամ կրավորակերպ չեզոք իմաստով կրավորվելիս: Բնականաբար, համարբանությունը պիտի փորձեր վերացնել այդ գործառական անհամամասնությունը, մանավանդ որ նշված երկու խմբի բայերին միմյանց հետ կապում էին մի կողմից՝ **ան** ընդհանուր ածանցը և խոնարհման արմատական հիմքը, մյուս կողմից՝ դեռևս գրաբարում խոնարհումային փոխանցումներ (այդ թվում՝ **անեմ / անիմ**) ունեցող բայերը. հմնտ. **զիջանեմ, անց. կատ. զիջի** և **զիջանիմ**, անց. կատ. **զիջայ** «տեղի տալ, ընդառաջ գնալ, հարմարվել, զի-

<sup>5</sup> Տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004, էջ 111, Յ. Մ. Ավետիսյան, Ո. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2003, էջ 27-30, Լ. Մ. Խաչատրյան, Գ. Բ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, էջ 152:

թել» և այլմ<sup>6</sup>: Բացի այդ, միջինհայերենյան **հասայ, գտայ, իջայ** և այլ կրավորատիպ խոնարհման ձևերի առաջացմանը, անշուշտ, նպաստել է նաև գրք. **ու** խոնարհման **ն** ածանցավոր բայերի համարանական ազդեցությունը, որի համար եղել է հետևյալ նախադրյալը. **ան** ածանցի շեշտագուրկ ա ձայնավորի անկումը **ե** և **ի** խոնարհման **ան** ածանցավոր բայերը ինքնըստինքյան մերձեցնում է **ու** խոնարհման **ն** ածանցավոր բայերին, մանավանդ եթե նկատի ունենանք իին հայերենից ժառանգված **նում / անիմ** և **նում / անեմ** փոխանցումներ ունեցող բայերի առկայությունը. հնմտ. գրք. **հեծանիմ / հեծնում, հեղծանիմ / հեղծնում, սկսանիմ / սկսնում, թքանեմ / թքնում** և այլն, մյուս կողմից՝ հնմտ. միջին հայերեն **թքնել / թքանուլ, հեծնել / հեծնիլ / հեծնուլ, սկսնիլ, ինչպես նաև՝ սկսնում**<sup>7</sup>: Ի դեպ, կարծում ենք՝ նախկին **ի** խոնարհման **ան** ածանցավոր և **ու** խոնարհման **ն** ածանցավոր բայերի համարանական ազդեցությունը **ե** խոնարհման **ան** ածանցավոր բայերի վրա ակնհայտ կերպով երևում է հենց միայն այն հանգամանքից, որ միջին հայերենում գրք. **ե** խոնարհման **ան** ածանցավոր բայերի մի մասը գուգահեռաբար հանդես է գալիս նաև **ի** և **ու** խոնարհման համապատասխան ձևերով. հնմտ. միջին հայերեն **տեսնուլ / տեսնիլ / տեսնել, գտնուլ / գտնել, մտնել / մտնուլ** և այլն: Իսկ գրաբարի **հասանել** և **անցանել** բայերը միջին հայերենում գերազանցապես հանդես են գալիս որպես **ի** խոնարհման բայեր՝ **հասնիլ** և **անցնիլ**:

Այսպիսով, գրք. **անեմ / անիմ, նում / անեմ, նում / անիմ** տիպի խոնարհումնային փոխանցումներ ունեցող բայերը, իսկ ավելի ուշ՝ **ան** ածանցի **ա-ի** անկումը (որի հետևանքով գրք. **ան** ածանցը արտաքնապես համընկել է **ն** ածանցին), կարծում ենք, եղել են այն հիմնական լեզվական գործոնները, որոնք նպաստել են համարանությամբ **հասայ, տեսայ, գտայ** և այլ կրավորատիպ վերջավորություններով ձևերի առաջացմանը, և դրա շնորհիվ ձևավորվել է **ն** ածանցավոր բայերի անցյալ կատարյալի խոնարհման մեկ ընդհանուր տիպ: Մյուս կողմից, հնարավոր է, որ հիշյալ փոփոխության դրդապատճառներից մեկն էլ եղել է ձայնավոր նախահավելվածի գործածությունից ազատվելու ձգուումը, որը մատնանշում է Յ. Աճառյանը<sup>8</sup>:

**САРГИС АВЕТЯН – Дальнейшее развитие аористных форм древнеармянских глаголов *Ե*-спряжения с суффиксом *ան*.** – Древнеармянские глаголы *Ե*-спряжения с суффиксом *ան*, спрягавшиеся в аористе с окончаниями активного типа, в дальнейшем стали спрятаться с окончаниями медиопассивного типа при активном значении. Исследователи обычно довольствовались констатацией этого изменения, но не объясняли его предпосылок и причин. Системный анализ, которому посвящена статья, показал, что ведущую роль сыграла здесь аналогия с глаголами *Ի*-спряжения с суффиксом *ան* и *ՈՒ*-спряжения с суффиксом *ն*.

<sup>6</sup> Այս և հետագա շարադրանքում հանդիպող գրաբարյան ձևերը քաղված են «Նոր բառագիրը հայկագեան լեզուի», հ. 1-2, Վեմետիկ, 1836, հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1980, Ո. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, հ. 1-2, Եր., 2000, աշխատություններից:

<sup>7</sup> Միջինհայերենյան այս և ստորև բերվող ձևերը վերցրել ենք Ո. Ս. Ղազարյան, Յ. Ս. Ավետիսիսյան, Միջին հայերենի բառարան, (Եր., 2009) աշխատությունից, տե՛ս նաև Յ. Աճառյան, Յայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 248:

<sup>8</sup> Տե՛ս Յ. Աճառյան, Լիակատար քերականություն..., հ. 4, Ա., էջ 405:

**SARGIS AVETYAN – *Further Development of the Aorist Forms of Old Armenian *b* Conjugation Verbs with the suffix *wā*.*** – As it is known, in Old Armenian the ***b*** conjugation verbs with the suffix ***wā*** formed the aorist with the help of active endings. However, beginning from the Middle Armenian period the active endings of these aorist forms were replaced by the mediopassive ones, the forms retaining the active meaning. Many scholars have simply referred to this development without attempting to disclose the main premises and motivation for the change.

A systemic analysis of respective forms leads to the conclusion that analogical influence of ***h*** conjugation verbs with the suffix ***wā*** and of ***n*l** conjugation verbs with the suffix ***ā*** has played a crucial role in transformation of the conjugation under discussion, and the following premises were available: the existence of verbs with parallel conjugations in **-wātēm / -wāhēm**, **-nōtēm / -wātēm**, **-nōtēm / -wāhēm** in Old Armenian and later the loss of the vowel ***w*** in the suffix ***wā***, resulting in the formal coincidence of the suffix ***wā*** with the suffix ***ā***.